

Արձանագրություն №2/2018-2019

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2018թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 65-ը (վաթսունհինգ):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ. գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ.Վ. Ներկարարյան):
2. ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին (զեկ. պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):
3. Հաղորդում 2018-2019 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
4. Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2017-2018 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
5. Հաղորդում 2018-2019 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
6. Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» բակալավրի ծրագիր հաստատելու մասին (զեկ. գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյան)
7. Տեղեկատվություն 2017-2018 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին (զեկ. ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
8. Հաղորդում ԵՊՀ ՈԻԳԸ 2017-2018 ուստարվա գործունեության մասին (զեկ. ՈԻԳԸ նախագահ Վ. Ա. Շերենց):

Ընթացիկ հարցեր.

9.1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում «Նորարարությունների տնտեսագիտության» ամբիոն ստեղծելու հարցում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին:

9.2. Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Ալբերտ Կիրակոսյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին:

9.3. Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին:

9.4. Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Լուսինե Սահակյանի «Համշենը հայկական ձեռագրերում» վերնագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

9.5. «ՀՀ արդարադատության համակարգը» (խմբագիր՝ Գ. Ղազինյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին:

9.6. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Պետրոսյանի «Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917թ. փետրվար – 1918թ. հունիս)» վերնագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին:

9.7. ԵՊՀ-ի 100-ամյակին նվիրված՝ «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու մասին:

9.8. «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» հանդեսի (հիմնադիր՝ Երևանի պետական համալսարան) 2018թ. 1-ին համարը հրատարակության երաշխավորելու մասին:

9.9. ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովների կազմերում փոփոխություններ կատարելու մասին:

9.10. Ֆիզիկայի ֆակուլտետի գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի գիտահետազոտական լաբորատորիան պրոֆեսոր Լևոն Մուրադյանի անվամբ անվանակոչելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին. - Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Իս. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին պրոֆեսորի և դոցենտի կոչումների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդն էր.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Հավակնած պաշտոնը
1.	Կնյազյան Աննա Տարիելի	Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Հավակնած պաշտոնը
1.	Հարությունյան Մարտին Վարդանի	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչ
2.	Հովսեփյան Կարեն Հայկի	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ
3.	Գարգալոյան Ռուզաննա Թաթոսի	Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ
4.	Բաղդասարյան Մառա Աղասու	Անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ
5.	Սիմոնյան Հայարփի Մանթաշի	Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար
6.	Թոչունյան Կարեն Արմենի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ
7.	Հակոբյան Վանիկ Թադևոսի	Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասիստենտ

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Բալայան Պավել (նախագահ)
2. Սարգսյան Սամվել
3. Ավետիսյան Համազասպ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 65 անդամներից 65-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Պ. Բալայանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	Դեմ	անվավեր
Պրոֆեսորի կոչման հավակնորդներ				
1.	Կնյազյան Աննա Տարիելի	61	2	2
Դոցենտի կոչման հավակնորդներ				
2.	Հարությունյան Մարտին Վարդանի	64	1	0
3.	Հովսեփյան Կարեն Հայկի	63	2	0
4.	Գարգալոյան Ռուզաննա Թաթոսի	64	1	0
5.	Բաղդասարյան Մառա Աղասու	65	0	0
6.	Սիմոնյան Հայարփի Մանթաշի	62	3	0
7.	Թոչունյան Կարեն Արմենի	61	4	0
8.	Հակոբյան Վանիկ Թադևոսի	65	0	0

Որոշեցին. – 1.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտե՝ հաստատելու վերոնշյալ աշխատակիցներին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու մասին ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը:

2. Լսեցին. – ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը նոր խմբագրությամբ

հաստատելու մասին: Պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյանը նշեց, որ նոր խմբագրությամբ հաստատման ներկայացվող կարգում փոփոխությունները վերաբերում են գերազանցապես վերաբերում են գիտահետազոտական գործունեության որոշ տեսակների կատարման համար վճարվող աշխատանքների նկարագրերին, որոնց մասին տեղեկատվությունը նախապես ուղարկվել էր գիտխորհրդի անդամներին:

Արտահայտվեցին. - Սովորող անդամ, ՌԻԳԸ նախագահ Վ. Շերենցը խնդրեց ուշադրություն դարձնել կարգի 2-րդ աղյուսակի 8-րդ և 9-րդ կետերին, որոնցով լրավճար է սահմանվում ՌԻԳԸ-ի գիտական ղեկավարման և ՌԻԳԸ-ի տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածուում ԵՊՀ ուսանողի կողմից հրապարակված աշխատանքի ղեկավարման համար: Վ. Շերենցը հայտնեց, որ չնայած առկա խթանիչ հանգամանքին՝ ՌԻԳԸ-ի գիտական ղեկավարումը պատշաճ չի իրականացվում, որ լինում են դեպքեր, երբ բակալավրի 3-րդ կուրսի ուսանողն է գրախոսում հայցորդի աշխատանքը: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը տեղեկությունը մտահոգիչ համարեց, սակայն նշեց, որ ըստ էության կարգի համապատասխան կետը չպետք է փոփոխել, այլ աշխատել համապատասխան աշխատակիցների կողմից պարտականությունները բարեխիղճ կատարելու ուղղությամբ: Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց հարցը քննարկել պրոռեկտոր Գևորգյանի և ՌԻԳԸ ներկայացուցիչների միջև հանդիպումներում: Քիմիայի ֆակուլտետի ղեկան Ս. Ղոչիկյանը հայտնեց, որ կարգում արտոնագիր գրանցելու համար լրավճար նախատեսված չէ, ինչին ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ արտոնագիրը կարգավիճակով հավասարեցվում է ԲՈԿ-ի կողմից հաստատված պարբերականների ցանկում ընդգրկված հանդեսում հրատարակված հոդվածին: Անցկացվեց քվեարկություն, որն անցավ միաձայն:

Որոշեցին. –

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը (նոր խմբագրությամբ)»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ գիտական խորհրդի 2018թ. հունիսի 28-ի թիվ 7/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»:
3. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթները տարածվում են 2018թ. սեպտեմբերի 1-ից հետո կատարված աշխատանքների վրա:

3. **Լսեցին.** - **Հաղորդում 2018-2019 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին:** Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը հայտնեց, որ, ինչպես և կանխատեսվում էր, ընթացիկ ուստարում ԵՊՀ ընդունված ուսանողների թիվը նախորդ ուստարվանից մոտ երկու անգամ պակաս է: Հայաստանի բուհեր 4500 ընդունված ուսանողներից 1510-ը ընդունվել են ԵՊՀ՝ մոտ 33 տոկոս, ինչը 3 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը): Իջևանի մասնաճյուղ ընդունվել է 65 ուսանող, ինչը մարզային բուհերի տեսանկյունից վատ ցուցանիշ չէ: Բոլոր ոչ պետական բուհեր միասին վերցրած ընդունվել է 8 ուսանող: Հեռակա համակարգում ԵՊՀ 260 դիմորդից ընդունվել է 177-ը, մյուս բուհերի պարագայում հեռակա ուսուցման համակարգ դիմած սովորողների գրեթե 100 տոկոսն ընդունվել է: Ա. Գրիգորյանը ներկայացրեց նաև ընդունելության պատկերը մագիստրատուրայում, ինչպես նաև պատկերն ըստ բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի:

Արտահայտվեցին. – Հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան Ա. Ավագյանը հետաքրքրվեց, թե ինչու 1-ին կուրսեցիները մինչ այժմ չեն ստացել ուսանողական քարտերը, ինչը

դժվարություններ է հարուցում, մասնավորապես, գրադարանից գրքեր ձեռք բերելու ժամանակ: Ռեկտոր Ա. Միմոնյանը հայտնեց, որ ռեկտորատը որոշել էր այս ուստարում քարտերը դարձնել ունիվերսալ, որոնցով ուսանողները կարողանան նաև հաշիվ բացել բանկերում և իրականացնել այլ գործառնություններ: Արարատքաննին ստանձնել է այս գործը, բայց բարդության ու ծավալի պատճառով ուշացնում է, թեև խոստացել են, որ առաջիկայում կավարտեն գործը: ԻԿՄ ֆակուլտետի ղեկան Վ. Դումանյանն առաջարկեց դիտարկել այդ քարտերը ԵՊՀ-ի կողմից թողարկելու հնարավորությունը: Ա. Միմոնյանն ընդունելի համարեց հնչեցված առաջարկությունը՝ առաջարկելով այդուհանդերձ սպասել Արարատքաննի քարտերին: Սովորող անդամ Հ. Ադոնցը, որպես լուծում, առաջարկեց, որ ղեկանատները ուսանողական քարտերի փոխարեն ժամանակավորապես փաստաթղթեր տրամադրեն ուսանողներին, որոնց ներկայացմամբ հնարավոր կլինի գրադարանից վերցնել գրքեր: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նման փաստաթուղթ դիտարկեց ընդունելության հրամանների պատճենները:

Որոշեցին. – Ա. Գրիգորյանի՝ 2018-2019 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. – **Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2017-2018 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:** Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը հայտնեց, որ 2017-2018 ուստարում 2-րդն է, ինչ ուսանողական հարցումներն իրականացվում են առցանց: Մասնակցության միջին համալսարանական ցուցանիշը կազմել է 48.2 տոկոս: Հաղորդման մեջ Ա. Գրիգորյանը, ի մասնավորի, նշեց, որ ֆակուլտետների ղեկանների/տեղակալների գնահատման միջին ցուցանիշը 5.00 հնարավորից եղել է 4.63: Ամենաբարձր ընդհանրացված ցուցանիշը գրանցվել է Արևելագիտության ֆակուլտետում՝ 4.84 միավոր, ամենացածրը՝ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում՝ 4.26 միավոր: Դեկանատներին տրվող միջին միավորը եղել է 4.60-ը: Ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Աստվածաբանության ֆակուլտետում՝ 4.90, ամենացածրը՝ ԻԿՄ ֆակուլտետում՝ 4.01 միավոր: Դրամի դիմաց գնահատական ստանալու վերաբերյալ հարցին դրական պատասխան է տվել հարցվածների 0.62 տոկոսը, մասնավոր պարապմունքների աղյուսքում գնահատական ստանալու հարցին՝ 1.27 տոկոսը:

Արտահայտվեցին. – սովորող անդամ Դ. Մաթևոսյանը հետաքրքրվեց, թե ինչ ընթացք է ստացել նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունն առ այն, որ հարցում էր պետք անել համապատասխան կառույցներին, թե արդյոք ուսանողական հարցման արդյունքների հրապարակումը անձնական տվյալների գաղտնիության խախտման հետ կապված խնդիրներ չի ստեղծում: Ռեկտոր Ա. Միմոնյանը հայտնեց, որ անհասկանալի պատճառներով հարցումը չի ուղարկվել և որ առաջիկայում կպարզվի և ընթացք կտրվի հարցին: Դ. Մաթևոսյանի 2-րդ հարցը վերաբերում էր կուրատորների աշխատանքները հարցվածների մոտ 30 տոկոսի կողմից ցածր գնահատվելու փաստին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ այդ գնահատումները տարբերվում են կրթական ստորաբաժանումից ստորաբաժանում և հավելեց, որ կուրատորների աշխատանքների գնահատմանը վերաբերող հարցման արդյունքները ևս տրամադրվում են ֆակուլտետներին՝ հաշվի առնելու ամբիոնային բեռնվածությունների կազմման գործում: Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց կուրատորային բեռնվածություն չդնել այդ հարցում թերացում ցույց տված աշխատակիցների վրա:

5. **Լսեցին.** - **Հաղորդում 2018-2019 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին:** Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը նշեց, որ բեռնվածության հարցն անմիջապես շաղկապվում է ընդունելության ցուցանիշներին, որոնք, ինչպես արդեն նշվեց, ընթացիկ ուստարում օբյեկտիվ պատճառներով մտահոգիչ են: 2018-2019 ուստարվա հաստատված ընդհանուր բեռնվածությունը 752106 ժամ է՝ նախորդ ուստարվա 812485 ժամի դիմաց: Ա. Գրիգորյանը ներկայացրեց ընդհանուր բեռնվածության բացվածքը՝ դասախոսություններ, գործնական և սեմինար պարապմունքներ, լաբորատոր պարապմունքներ, քննություններ և ստուգաքննություններ, դեկլարում, պրակտիկա և այլն: Ամբողջական դրույքների քանակը 2018-2019 ուստարում կազմել է 1010.5՝ նախորդ ուստարվա 1099-ի դիմաց: Բեռնվածությունների բաշխվածությունը ներկայացվեց նաև ըստ դասախոսների տարիքային խմբերի, ըստ կարգավիճակների (հիմնական աշխատողներ, ներքին ու արտաքին համատեղություններ, ժամավճարային հիմունքով աշխատողներ): Հարցեր չհնչեցին:

Որոշեցին. - 2018-2019 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին Ա. Գրիգորյանի հաղորդումն ընդունելի գիտություն:

6. **Լսեցին.** - **Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» բակալավրի ծրագիր հաստատելու մասին:** Գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է. Ս. Գևորգյանը նշեց, որ առաջարկվող ծրագիրն անցել է ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի բոլոր փուլերով:

Արտահայտվեցին. - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Խ. Ներկարարյանը կարծիք հայտնեց, որ ծրագրի անվանումը առնչվում է ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մասնագիտական ոլորտին՝ հավելելով, որ իր կարծիքը տարակուսանք է միաժամանակ այն պատճառով, որ նախկինում ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կողմից առաջ քաշված ծրագիրը նույն հիմքով մերժվել է: Է. Գևորգյանը նշեց, որ որակի ապահովման հանձնաժողովն իրավասու չէ զբաղվել կրթական ծրագրերի մասնագիտական բովանդակությամբ, այլ որ այն հետևում է որակի ապահովման պրոցեդուրալ տարրերի պահպանմանը: ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանն ասաց, որ առաջարկվող ծրագրի անվանումը որևէ կերպ չի կարող հատվել իր դեկլարացիոն ֆակուլտետի մասնագիտական ուղղությունների հետ: Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել ծրագիրը: Քվեարկությունն անցավ 64 կողմ, 1 ձեռնպահ ձայնով:

Որոշեցին. - **Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում հաստատել «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» բակալավրի ծրագիրը:**

7. **Լսեցին** - **Տեղեկատվություն 2017-2018 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին:** Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանը նշեց, որ փոխատեղման հարցում նախորդ տարիների հետ համեմատած համամասնության պահպանում է նկատվում: 2017-18 ուստարվա արդյունքներով պետության կողմից ուսման վարձավճարի ամբողջական փոխհատուցմամբ 17 տեղ թափուր է մնացել: Այդ տեղերը հիմնականում բաժին են ընկնում ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի և քիմիայի ֆակուլտետներին: Հ. Ժամհարյանն ընդգծեց, որ մանդատային հանձնաժողովը ուսումնասիրել է նշված բոլոր դեպքերը: Բանախոսի կողմից

ներկայացվեցին պետպատվեր համակարգի անցողիկ միջին որակական գնահատականներն ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի: **Հարցեր չիչեցին:**

Որոշեցին. – Հ. Ժամհարյանի հաղորդած տեղեկատվությունը 2017-2018 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին ընդունել ի գիտություն:

8. **Լսեցին.** – **Հաղորդում ԵՊՀ ՈԻԳԸ 2017-2018 ուստարվա գործունեության մասին:** ՈԻԳԸ նախագահ Վ. Ա. Շերենցը գիտական խորհրդին ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանի ՈԻԳԸ միջոցառումների հիմնական բնութագիրն ու դինամիկան: Բանախոսն ընդգծեց, որ աշխատանքներ են տարվում միջոցառումների խոշորացման ուղղությամբ: 2017-2018 ուստարում ՈԻԳԸ կազմակերպած միջոցառումների թիվը եղել է 495 (գիտաժողովներ, աշխատաժողովներ, դասընթացներ, սեմինար-քննարկումներ, դատախազեր և այլն): Վ. Շերենցը կենտրոնացավ հատկապես ՈԻԳԸ գիտաժողովների թեմատիկայի, մասնակիցների աշխարհագրության վրա: Այսպես, այդ մասնակիցների 66 տոկոսը ԵՊՀ ուսանողներն են, 24 տոկոսը՝ Հայաստանի այլ բուհերի ուսանողները և 10 տոկոսը՝ արտասահմանցի ուսանողները: ՈԻԳԸ-ը հրատարակել է 194 հոդված: Ներկայացվեց նաև ՈԻԳԸ անդամության պատկերն ըստ կրթական ստորաբաժանումների և սեռային բաշխվածության: ՈԻԳԸ անդամների թիվն այսպիսով հաշվետու ժամանակաշրջանում եղել է 354, ֆակուլտետային ՈԻԳԸ անդամների միջին թիվը՝ 15: ԱՆդամների 75 տոկոսն իգական սեռի ներկայացուցիչներն են: Ներկայացվեց նաև ՈԻԳԸ անդամների ակնառու հաջողությունները, ՈԻԳԸ-ում տեղի ունեցած կադրային ու կառուցվածքային փոփոխությունները, երեք նոր ստորաբաժանումներում (Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, ֆարմացիայի ինստիտուտ, մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն) ՈԻԳ րնկերություններ ստեղծելու փաստը: Առանձնակի շեշտվեց «ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականին տպագրության տրվող հոդվածի կազմման նոր չափորոշիչներ մշակելու հանգամանքը: ՈԻԳԸ թերացումների կամ առաջացած խնդիրների շարքում բանախոսն առանձնացրեց պարբերականի տպագրության գործընթացի ուշացումը (ինչը, մասնավորապես, ըստ բանախոսի, պայմանավորված է ՈԻԳԸ խորհրդատուների վճարումների ուշացմամբ), ՈԻԳԸ գործող կանոնադրության փոփոխության ձգձգումը, ՈԻԳԸ գիտական խորհրդատուների աշխատանքի վերահսկման մեխանիզմի բացակայությունը (ի մասնավորի, բանախոսը բարձրաձայնեց աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դասախոսներ Ռուբեն Մովսիսյանի և Ֆելյա Ֆալոյանի խորհրդատուի աշխատանքներից ուսանողների դժգոհությունը) և այլն:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց հրաժարվել բոլոր այն դասախոսների՝ ՈԻԳԸ խորհրդատուի ծառայություններից, ովքեր դրա դիմաց վարձատրություն են պահանջում՝ շեշտելով, որ խորհրդատվությունը հասարակական աշխատանք է: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանն առաջարկեց ներկայացնել բոլոր այն խորհրդատուների ցուցակն, ովքեր, ըստ Վ. Շերենցի հավաստման, չեն կարողում աշխատանքներն առհասարակ: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը տարակուսանք հայտնեց, որ ՈԻԳԸ անդամ համարվում են բացառապես ՈԻԳԸ աշխատանքներ կազմակերպող ուսանողները, մինչդեռ, ըստ նրա, այդպիսիք պետք է համարվեն ՈԻԳԸ գործունեության մեջ ներգրավվող բոլոր ուսանողները, օրինակ՝ նրանք,

ովքեր մասնակցում են միջոցառումներին, գրում են հոդվածներ, զեկույցներ: Վ. Շերենցն արձագանքեց, որ մինչ օրս առկա անդամության կարգով ՌԻԳԸ անդամության երաշխավորում է ամբիոնի վարիչը, իսկ ֆակուլտետային ՌԻԳԸ ցուցակը հաստատում է ղեկանը: Ա. Սիմոնյանն առաջարկեց ՌԻԳԸ նոր կանոնադրության մեջ ազատականացնել անդամագրումը:

Որոշեցին. – Վ. Շերենցի հաղորդումը ԵՊՀ ՌԻԳԸ 2017-2018 ուստարվա գործունեության մասին ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

9.1 Լսեցին. – Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում նորարարությունների տնտեսագիտության ամբիոն բացելու առաջարկով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին: Ֆակուլտետի ղեկան Հ. Լ. Սարգսյանը ներկայացրեց նշված ամբիոնն ստեղծելու հիմնավորումը:

Արտահայտվեցին. – Գրադարանի տնօրեն Ե.Ս. Միրզոյանը հետաքրքրվեց, թե արդյոք նոր ստեղծվելիք ամբիոնի կողմից նախատեսվող առարկաներից այժմ կարդացվում են: Հ. Սարգսյանը դրական պատասխանեց: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Սահակյանը հետաքրքրվեց՝ արդյոք ամբիոնի անվանումը համապատասխանում է գոյություն ունեցող հաստատված մասնագիտություններին: Հ. Սարգսյանը նշեց, որ ֆակուլտետում այժմ գործում է «Ինովացիոն կառավարում» մագիստրոսական ծրագիրը: Առարկություններ ու առաջարկություններ հնչեցին անվանման հետ կապված: Ի վերջո համաձայնություն կայացվեց «Նորարարությունների տնտեսագիտություն» անվան փոխարեն գործածել «Նորարարության տնտեսագիտություն» անվանումը: Քվեարկությունն անցավ 64 կողմ, 1 ձեռնպահ ձայներով:

Որոշեցին. – միջնորդել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ստեղծելու «Նորարարության տնտեսագիտության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

9.2 Լսեցին - Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Ալբերտ Կիրակոսյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդն է նշված հարցով միջնորդում ԵՊՀ գիտական խորհրդին այն հիմքով, որ պրոֆ. Ա. Կիրակոսյանը շուրջ 20 տարի անընդմեջ ղեկավարել է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնը, ստեղծել պինդ մարմնային նանոֆիզիկայի բնագավառում հաջողությամբ աշխատող դպրոց: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 10 թեկնածուական ատենախոսություն: Նա եղել է 2 դոկտորական ատենախոսությունների խորհրդատու: Ա. Կիրակոսյանը ֆիզիկայի բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար 2013թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

Որոշեցին. – Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ալբերտ Ավետիսի Կիրակոսյանին պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչի պարտականությունները վայր դնելու կապակցությամբ շնորհել նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

9.3 Լսեցին. - Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը տեղեկացրեց, որ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդն է նշված հարցով միջնորդում ԵՊՀ գիտական խորհրդին այն հիմքով, որ Վ. Հարությունյանը ղեկավարել է ամբիոնը 41 տարի: Նա Հայաստանում կիսահաղորդիչների ֆիզիկայի և նանոէլեկտրոնիկայի ուղղության հիմնադիրներից է, դասագրքերի և ձեռնարկների հեղինակ: Նրա ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են 36 թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Որոշեցին. –

1. Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վլադիմիր Միքայելի Հարությունյանին կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչի պարտականությունները վայր դնելու կապակցությամբ շնորհել նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. դեկտեմբերի 17-ից:

9.4 Լսեցին. - Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, թյուրքագիտության ամբիոնի դոցենտ Լուսինե Սահակյանի «Համշենը հայկական ձեռագրերում» վերնագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը ընդհանուր գծերով ներկայացրեց կատարված աշխատանքի ծավալն ու թեմատիկ ընդգրկումը՝ նշելով, որ այն հանդիսանում է հեղինակի տարիների տեսական ու դաշտային հետազոտության արդյունքը և հույժ կարևոր քայլ է հայագիտության ոլորտում:

Որոշեցին. - «Համշենը հայկական ձեռագրերում» վերնագրով մենագրությունը (հեղինակ՝ Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյան) երաշխավորել հրատարակության:

9.5 Լսեցին. - «ՀՀ արդարադատության համակարգը» (խմբագիր՝ Գ. Ղազինյան) աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳ նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը տեղեկացրեց, որ հիշյալ հարցով միջնորդություն է ներկայացրել իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը: Նոր դասագրքի հրատարակման անհրաժեշտությունը պայմանավորված է 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով, սահմանադրական և մի շարք այլ օրենքների ընդունմամբ, որոնք իրավագիտության ֆակուլտետում կարդացվող «ՀՀ արդարադատության համակարգը» դասընթացի հիմնական աղբյուրներն են:

Որոշեցին. –

1. «ՀՀ արդարադատության համակարգը» վերնագրով աշխատանքը (խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Ղազինյան) երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

9.6 Լսեցին. - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Պետրոսյանի «Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917թ. փետրվար – 1918թ. հունիս)» վերնագրով մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը տեղեկացրեց, որ հիշյալ հարցով միջնորդություն է ներկայացրել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը: Մենագրության մեջ դիտարկված են Հայաստանի առաջին Հանրապետության անկախության կերտման պրոցեսին առնչվող վիճահարույց մի շարք խնդիրներ:

Որոշեցին. - «Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս)» վերնագրով մենագրությունը (հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյան) երաշխավորել հրատարակության:

9.7 Լսեցին. - **ԵՊՀ-ի 100-ամյակին նվիրված՝ «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերի ժողովածուն հրատարակության երաշխավորելու մասին:**

Որոշեցին. - «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովի (նվիրված Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-րդ տարեդարձին) նյութերը երաշխավորել հրատարակության:

9.8 Լսեցին. - «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականի (հիմնադիր՝ Երևանի պետական համալսարան) 2018թ. 1-ին համարը հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը հայտնեց, որ նշված պարբերականում զետեղված են 2018թ. աշնանը Արցախում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի զեկուցումները: Այդ գիտաժողովին մեծ մասնակցություն են ունեցել ԵՊՀ դասախոսներն ու սովորողները:

Որոշեցին. - «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականի 2018 թվականի 1-ին համարը երաշխավորել հրատարակության:

9.9 Լսեցին. - **ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովների կազմերում փոփոխություններ կատարելու մասին:** Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը նշեց, որ քաղաքացիական դատավարության ամբիոնի նախկին վարիչ Ս. Մեղրյանի՝ ԵՊՀ գիտական խորհրդի կազմից (հետևապես և գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի կազմից) դուրս գալու, ինչպես նաև ուսումնառության ավարտի ու սեփական դիմումի հիման վրա մի շարք սովորող անդամների՝ ԵՊՀ գիտական խորհրդի կազմից կամ գիտական խորհրդի հանձնաժողովի կազմից դուրս գալու կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ:

Որոշեցին. -

1. ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմից հանել Դավիթ Արարատի Ափոյանին:
2. Հանձնաժողովի կազմում հաստատել ուսանողական խորհրդի փոխնախագահ, գիտական խորհրդի անդամ Դավիթ Վարդանի Մաթևոսյանին:
3. ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի էթիկայի հանձնաժողովի կազմից հանել Դավիթ Արարատի Ափոյանին, սեփական դիմումի համաձայն հանձնաժողովի կազմից դուրս գալու կապակցությամբ՝ Լիլիթ Աշոտի Հարությունյանին:
4. Հանձնաժողովի կազմում հաստատել գիտական խորհրդի սովորող անդամներ Դավիթ Վարդանի Մաթևոսյանին, Տաթևիկ Արամի Սողոմյանին:
5. ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի կազմից հանել Սերգեյ Գուրգենի Մեղրյանին, Մարգարիտա Սևադայի Ղազարյանին:
6. Հանձնաժողովի կազմում հաստատել քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, գիտական խորհրդի անդամ Վահե Վաղինակի Հովհաննիսյանին, գիտական խորհրդի սովորող անդամ Ժենյա Գևորգի Թոթոյանին:

7. ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի կազմից հանել Գևորգ Արշավիրի Արշակյանին, Սևակ Վիգենի Գրիգորյանին:
8. Հանձնաժողովի կազմում հաստատել սովորող անդամներ Հովհաննես Վարդանի Ադոնցին (բնագիտական մասնագիտությունների գծով), Արշալույս ՍարգսիՂազարյանին (հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների գծով):

9.10 Լսեցին. - Ֆիզիկայի ֆակուլտետի գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի գիտահետազոտական լաբորատորիան պրոֆեսոր Լևոն Մուրադյանի անվամբ անվանակոչելու մասին: Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ միջնորդությունը ներկայացրել է ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը: Ֆիզիկայի ֆակուլտետի գերարագ օպտիկայի լաբորատորիան հիմնադրվել է Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Արա Ապկարյանի աջակցությամբ և 2000-2005թթ. համալրվել պրոֆեսոր Լևոն Մուրադյանի ղեկավարությամբ իրականացված ՆԱՏՕ-ի ԳհԽ ծրագրի միջոցով: Այդ ծրագրի շնորհիվ լաբորատորիան ձեռք է բերել տարածաշրջանում եզակի գերժամանակակից լազերային համակարգ և այլ օպտիկական սարքավորումներ: Հաշվի առնելով Լ. Մուրադյանի մեծ ավանդը լաբորատորիայի ստեղծման գործում՝ ֆակուլտետը միջնորդում է գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի լաբորատորիան կոչել պրոֆ. Լևոն Մուրադյանի անունով:

Որոշեցին. - Ֆիզիկայի ֆակուլտետի գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի գիտահետազոտական լաբորատորիան կոչել պրոֆեսոր Լևոն Մուրադյանի անվամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

11.12.2018թ.